ՏՈՒՆ ԵԿ ՔՐԻՍՄՍԻ ՀԱՄԱՐ

Մաս 1

Սա ի՞նչ է ասում մեզ Աստծո մասին

- Աստված այնքան համբերող է որ չի հուսահատվի

«Եվ վեր կացավ իր հոր մոտ եկավ: Ու երբ նա դեռ հեռու էր, հայրը նրան տեսավ...» Ղուկաս 15:20

«Տերը ...համբերատար է, որովհետև չի ցանկանում, որ որևէ մեկը կորստյան մատնվի, այլ որ բոլորն էլ ապաշխարության գան:» 2 Պետրոս3:9

- Աստված այնքան բարի է որ անսահման սեր է ցույց տալիս

«...հայրը...վազեց, նրա վզովն ընկավ...» Ղուկաս 15:20

«...նրա վզովն ընկավ ու համբուրեց նրան:» Ղուկաս 15:20

«Տերն արդար է իր բոլոր ճանապարհների մեջ և ողորմած է իր բոլոր գործերում:» Սաղմոս 145:17

- Աստված այնքան ներող է որ ինձ կ՝նդունի

«Եվ որդին նրան ասաց. "Հա՛յր, մեղանչեցի երկնքի ու քո առաջ: Այլևս քո որդին կոչվելու արժանի չեմ":» Ղուկաս 15:21

«Մեր Տեր Աստծունն են ողորմությունը և ներողամտությունը, որովհետև մենք ապստամբեցինք նրա դեմ.» Դանիել 9:9

Անձնական դարձրու

1. Ինքդ քեզ արի

«Եվ սթափվելով՝ ասաց. "Քանի՞ վարձկաններ հորս մոտ առատ հաց ունեն, իսկ ես այստեղ սովամահ կորչում եմ:» Ղուկաս 15:17

«Ժամանակի հետ կապված՝ սա՛ էլ իմացեք. արդեն քնից զարթնելու ժամն է...» Հռովմայեցիս 13:11

2. Արի խոստովանիր

«..."Հա՛յր, մեղանչեցի..."» Ղուկաս 15:18

«Իր հանցանքները ծածկողը հաջողություն չի ունենա, բայց խոստովանողն ու դրանք լքողը գթություն կգտնի:» Առակած 28:13

3. Տուն արի

«Վեր կենամ հորս մոտ գնամ...:» Ղուկաս 15:18

«Նրան հավատալով՝ համարձակություն ունենք վստահաբար Աստծուն մոտենալու:» Եփեսացիս 3:12

4. Արի տոնիր

«Հայրն իր ծառաներին ասաց. "Իսկույն բերե՛ք լավագույն պատմուճանը ու հագցրե՛ք նրան, մատին մատանի՞ դրեք և ոտքերին՝ կոշիկներ: Բերե՛ք պարարտ եզը, մորթե՛ք. ուտենք, ուրախ լինենք, որովհետև իմ այս որդին մեռած էր ու կենդանացավ, կորած էր ու գտնվեց": Եվ սկսեցին զվարճանալ:» Ղուկաս 15:22-24

«Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև Աստծով ենք պարծենում մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, որով հիմա հաշտությունն ընդունեցինք:» Հռովմայեցիս 5:11

Հաջորդ Քարոզի Թեման

ՏՈՒՆ ԵԿ ՔՐԻՍՄՍԻ ՀԱՄԱՐ (Մաս 2)

Հովիվ Սարօ Խաչիկեան